## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 03.01.01-27

ք. Երևան «30 » _01_ 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր քարտուղար Ն. Հարությունյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քաջարանի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս հաստատության տնօրեն Ա. Առաքելյանի, ով գործում է հաստատության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» ծրագրի շրջանակներում Քաջարանի արհեստագործական ուսումնարանի միջին տարեկան 38 սովորողների (առանց ընդունելության) ուսուցումը՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի 09.03.01.01 <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում>> ծրագրով նախատեսված միջոցների շրջանակներում:

### 2 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված ուսանողական նպաստների ձևով, ուսման վարձի լրիվ փոխհատուցումը կազմում է մինչև 36032000 (երեսունվեց միլիոն երեսուներկու հազար) ՀՀ դրամ:

2.2 Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

### 3 ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

### 4 ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը գործում է մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
| --- | --- |
| ՀՀ կրթության և գիտության նախարարություն | «Քաջարանի արհեստագործական ուսումնարան» ՊՈԱԿ |
| ք. Երևան, Վ. Սարգսյան 3 | ք. Քաջարան, Խանջյան 5 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչության | ՀՀ ՖՆ գործառնական վարչության |
| Հ/Հ 900011005452 | Հ/Հ 900318000503 |
| Նախարարության գլխավոր քարտուղար | |
| ---------------- Ն. Հարությունյան (ստորագրություն) | Տնօրեն ---------------- Ա. Առաքելյան (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ. |